



# ՀԱՅ ԳԻՐԸ

ՔԱՆԱԾՈՒՅԻՆ ԻՍՏԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՆԴԱՆՆԵՐ  
ՏԷՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՆԴԱՆՆԵՐ ՄԵՋ

Ռ.

Այսօրուան Հայուն տնտեսական ու-  
րախուսութիւնը բնականաբար փայլակի մը  
արագութեամբ կ'անհետանայ: Եթէ յա-  
ջողիք զէթ կայծ մը կորցնէ անկէ, պիտի  
յաջողիք անոյ համառարած չեմուքիւն  
մը յառաջ բերի մեր ազգային կեանքին  
մէջ և յառաջ զէպի բարձրագոյն իտեղը  
մղի մեր ազգային զարգացումը:

Այսպիսի հանդէսներու իրական նպա-  
տակն այժմուցուրդը վայրկեական գի-  
նովութեան մը ենթարկել չէ, այլ զայն  
մտազն, անոր արիւնք վերանորոգել և նոր  
մտածումներու, ձեռնարկներու թելադ-  
րել:

Այսօր ո՞վ գիտէ թէ ո՞րքան պերճա-  
խօս առեւտրականներ աւելի բարեխախտ  
ունկնդիրներու առջեւ կ'ընեն զարե-  
նութեան վարձարդիւններն և իրօտն ու  
կենդանի կ'ներկայանան Սուրբ Սահակ  
բազմած Ս. Լուսաւորչի Աթոռին վրայ և  
Ս. Մեսրոպ հրաշագիւտ արքեպիսկոպոսն ի  
ձեռին, մայրն Հայ գեղարուեստ գրական  
նութեան:

Իսկ մենք ոչ նուազ բարեբախտ ենք  
որ կ'վայելենք պատուական ներկայու-  
թիւնը նոյն Մայր Աթոռոյ հարազատ Հայ-  
րապետութեան ներկայացուցիչ Տ. Տ.  
Սահակ շնորհաբար Ս. Կաթողիկոսին,  
որուն երկայնատեղեանք վստահելով  
կուզամ իմ սանձաւարական թելադրու-  
թիւններս բերել Ձեզի յարգոյ հանդիսա-  
կաններու:

1. Ինքնայայտ է թէ մենք այս օ-  
րուց նախ կ'անդրադառնանք ակնարկ մը  
նեղեցու այն շքանդ զբաղմունքներն որ  
Ս. Մեսրոպի այրուբեղնն սերած, աճած  
ու թաղանթած լիցուց Աստուծոյ նոր  
դրամաբար—Հայ Եկեղեցին, անկուած կո-  
րուսեանք տրախտին ամայութեանք վրայ:  
Այս կենդանի անձանք երբեք Հայ գրա-  
կանութեան բարձրագոյն կ'գործող մեզի  
Լուսաւորչին, Սահակին ու Մեսրոպին  
պաշտած Աստուծոյ, որուն միակ պատ-  
պանութեամբն այրած է Հայ Ազգը անոր  
փառաւորեալ որդւոյն Քրիստոսի ամթո-  
ռին առջեւ, առաին տեղը գրաւելով  
ազգերու շարժին իրեն նանձառակ ազգ և  
դեռ շարունակութիւն խաչի զոհին: Հոն  
կ'սրայի մեր ազգային դարաւոր պատ-  
կերք, հոգեբանութիւնը մեր նախնեաց և  
պատմական տխրանուշ անջփերը որ մեր  
ազգն ենթարկել են բարոյական, մասնոր  
ու քաղաքական այլազան փոփոխութեան,  
և յեղարկումներու:

Հարկ կայ ըսելու թէ այս ընդարձակ  
նկարը Հայ կեանքին, որքան յուզիչ է և  
քստմեկիւն, նոյնքան պանծալի է ու իրա-  
խօսիչ:

2. Այս օրու մեզ կ'ներշնչէ սիրովը  
Հայ մասնագրութեան—Հայ հին և նոր  
գրականութեան և կ'պարտադրէ մեզ հաւա-  
տարիմ աւանդապանութեան մեր լոյս  
հաւատարմ նեղ առողջ և անախտ զբո-  
րութիւն մը ժառանգ մալ մեր ներկայ և  
յաջորդ սերունդներուն ու յիշողու որ  
թիւնաւոր գաղափարներ, անհաստու-  
թեան սերմեր, եղբարբայրական սրտեր  
մուտ գտնեն Հայ գրականութեան մէջ և  
մեղքներն մեր կենդանի գրականութիւնը  
և անմեղ զպիրն Մեսրոպեան տառերուն:

3. Այս օրու մեր աչքը կ'ընայ գնա-  
հատել և արժեքներ այսքան թանկագին  
զոհող գիրքն ու լեզուն, ու երբ կ'ա-  
մազու ինք թէ ա՛նչ զոհողութիւնները  
գերազանցող սա մեծագոյն հարստու-  
թիւնը մեծագոյն ժառանգութիւնն է որ  
կրնանք թողնել մեր որդիներուն, պէտք է  
զպրօքը ըլլայ աւելի շքեղ մեր մէջ երբեք  
զոյնութիւն ունեցող հոյակապ ապարանք-  
ներէն:

Չէտք է զպրօքը մեր հնչուն պար-  
տականութեամբը իրաւամբ թաղմի մեր  
առանին պէտքերուն գուրբոյ: Բայց այս-

քան միայն, ո՞չ ապաքէն շատերու հա-  
մար ուսում, դաստիարակութիւն պարզ  
յաւադրական առնաւոր մ'ենյուր չի նըը-  
մարուր նախանձաւորութիւն մը Հայ գի-  
րին ու գիրքին և ոչ յարգանք անոնց վե-  
հաշուք հեղինակներուն, որոնց ճշմարիտ  
մնայուն համազգային յարգանքը մի միայն  
մտածումն է մեր ընդհանրական Ս. Հայ-  
րապետին, Գէորգ Ս. Վեհ. Կաթողիկո-  
սին: Ն. Ս. Օճուրիւնը գեղեցկագոյն  
յղացումն ունեցաւ մշտնջենաւորելու Հայ  
Դպրութեան և անոր անդամների ուսուց-  
չապետին արժանաւայելի յարգանքը և  
համակրութիւնն ա՛նչնէն գործնական ու  
ազգային ձեռնարկներութեամբ և համազ-  
գային ընծայարկութեամբ Մեսրոպեան  
դպրոցներ տալ Հայ ազգատիկ մանկուոյն:

Ան այս ընծայարկութեան վերջին  
արդիւնքն ի յայտ պիտի բերէ մեր ճշմա-  
րիտ Հայութեան և առ Ս. Սահակ ու  
Մեսրոպ զգացած մեր շնորհագրութու-  
թեան չափանիշը, որ միաժամանակ չա-  
փանիշը պիտի ըլլայ մեր ճշմարիտ անձ-  
նասիրութեանը, այնու գի ազգին աղ-  
քատ դասակարգին ինչպէս շքատուրու-  
թիւնը նոյնպէս և աղետութիւնը կ'ընտել-  
ազգային և հետեւաբար անհատական յա-  
ռաճիւնութեանը:

4. Այս օրու մեզ կ'ընայ կ'ընայ թէ  
նախ մեր լեզուն, գիրքը, գրականու-  
թիւնը նոյն ազգին ձայնն է— անոր  
բանին մարմնացումը, անոր հոգե-  
կան վիճակին արտացոլումը, անոր նկար-  
ագիրքին ընթերցարանը: Արքան ազնիւ  
ու միազգայող ըլլայ ազգին մը հիւլե-  
կան—անհաստական շարքն ու զանգուածը,  
այնքան քաղցրանշնչիւն պիտի ըլլայ անոր  
յայնք: Այսօր Հայ ազգի քաղաքական ու  
կրօնական—կուսակցական ու յարանուա-  
նական բեկորներն առնթնդրած ներ-  
դաշնակ ձայն մը կ'ընեն. այս չի բաւեր-  
պէտք է այսօր բորբոքող սէրը կարենայ  
այդ բեկորները հալեցնել և օտարմուտ  
դիրտերէն զայն գաւելով ձուլել ինքնա-  
տիպ Հայ ազգ մը:

Ան այն առին Հայուն յայն կ'ըլլայ  
սիրտաւոր և համառարած, ու կ'հասնի  
մինչև Բարձրելոյն Աթոռը, մինչև Ս. Սա-  
հակի և Մեսրոպի ու բոլոր Հայ սուրբե-  
րու հոգեբանին խորամը, հոն անօնք  
պիտի հրճուին լեզուի իրենք բարեպաշ-  
տիկ զգացումներուն երկրաւոր հարազատ  
արձագանքը, և ո՞վ գիտէ թէ ի՞նչ յու-  
զումով մը պիտի աղաղակեն Հայ ազգին  
փրկարար աւետիս մը բերող Ամեն:  
Մասնաւորելով խօսքս ձեզի, դաշ-  
տեցի կիլիկեցիներու, ա՛նչնէն յետաւանց  
Տէրթ-Սոյցիներու և այսպէս բոլոր կի-  
լիկոյ Հայութեան, ցաւ ի սիրտ ստիպ-  
ուած ենք ըսել թէ դուք միայն թըռ-  
չունք մը կ'անանք, ունենալով Հայ Գիրք,  
բայց ոչ Հայ Լեզուն: 1,500 առիտ առաջ  
կար Հայ լեզուն, բայց ոչ Հայ գիրք, ու  
դուք առաւելապէս կ'զանուիք այն հին,  
բայց միայն վառագուր որդութեան մէջ,  
մասնաւոր այսպիսի դարու մը մէջ, երբ  
զօրաւոր սարբերը տկարներ, ինքնանս  
ձուլելու դիտումով կ'իբրարկեն զգիրքն ու  
լեզուն համայնակուլ հայոցը:

Բարեբաղմունքն ու Միացեալը ձեզ  
այս վտանգէն փրկելու համար ոչինչ կը  
իմայնեն կիլիկոյ Շնորհաբար Կաթո-  
ղիկոսը նոյն ըզձեռ անձամբ ձեռնադրեց,  
որոնց Այնթապիներուն ա՛յնքան զովե-  
լի մեծ ձեռնարկեց եղող կիլիկեան ընծա-  
րանը: Իսկ դուք այս բոլոր ջանքերը  
պէտք է պատկէ՛ք ձեր ներթափանց ու բա-  
րոյական լուր՝ աջակցութեամբ:

Գէթ պիտի մը բարի եղջեր մերժելով  
ամէն այլարարաւ թերթն ու գիրք, զէթ  
հայազգեաները Հայրենի խօսեցէք ու մի՛  
արհամարէ՛ք այսքան զոհողով ձեզի հա-  
տած, բայց բնութեամբ ձեզմէ իւր-  
ուած լեզուն:

Հայ գիրքն 1,500ամեակին հետ օճ-  
ուող Հայ ազգայնութեան 400ամեակը  
հաւասարապէս համարէ՛ք ըլլալով հան-  
դերձ, մեր հանդէսն իսկ ինծի վանկու-  
տայ թէ Հայ ազգայնութեան նախաւայր  
Յակոբը նուազ ու յարգաւոր է այսօր ամէն

տեղ, գուցէ անոր համար որ նա ինք-  
զինքը Վերապարտած մականունանած է և  
բախտ չէ ունեցեր զասուել ի շարս սրբոց :

Բայց բառ որում Մերապարտ Յակոբը  
Կիլիկեցի էր, գէթ զուք Կիլիկեցիներէ  
սրբացուցէք զայն, Կիլիկիոյ մէջ յանուն  
Մերապարտ Յակոբի հիմնելով մամուլ մը  
և թերթ մը, ուր Մերապարտ Յակոբը  
խօսի ու հրճուի և արդարանայ անոր  
ճշմութեամբը և այլևս կոչուի Արդար  
Յակոբ, որպէս անուանեց զայն Վեհ. Ս.  
Կաթողիկոսը : Կեցցէ՛ Հայ գիրն ու զըզ-  
րութիւնը : Յիշատակ արդարոցն Սահա-  
կայ, Մեսրոպայ և Յակոբայ օրհնութեամբ  
եղիցի :

ԽՆԶԼՏՈՒՐ ԳՌՈՒԶՆԷՆ

Վ. Ն. Բ. Զ.